ՀՏԴ 378

Տնտեսագիտության տեսության գործնական և սեմինար պարապմունքների խնդիրներն ու դրանց արդյունավետության բարձրացման մի քանի հարցեր

Սամվել Ժամհարյան

Հանգուցային բառեր. *առարկայի էությունն ու կառուցվածքը, ուսուցման ձևերն ու մեթոդները, հետազոտության առարկան, շուկայական հարաբերություններ, տեսական նշանակության ծախսեր, արդյունավետություն, ենթախումբ*

Նախաբան

Հասարակական-տնտեսական կյանքի դրսևորման ձևերից մեկն էլ տնտեսագիտության տեսությունն է, որի ուսումնասիրության առարկան ներկայումս էլ գտնվում է գիտական վերլուծության ու զարգացման փուլում:

Այսօր՝ համընդհանրացման (գլոբալիզացիայի) և հասարակության ժողովրդավարացման պայմաններում, այլ գիտակարգերի հետ միասին մեծանում են նաև տնտեսագիտությանը ներկայացվող պահանջները, որոնք, սակայն, քաղաքական ու տնտեսական ցնցումների ժամանակ փոփոխվում են: Հիշենք, օրինակ, 2008-2009 թթ. Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը և այսօր Քովիդ-19-ով պայմանավորված համավարակը: Վերջինիս կապակցությամբ տնտեսագիտական սոցիոլոգիայի մասնագետ Վ. Կ. Կատուսոնովը գրում է. «Դժվար է ասել, թե տնտեսության որ ճյուղին այս համավարակը չի վնասել»[1]: Վստահաբար կարելի է արձանագրել, որ այն չի շրջանցել նաև կրթության ոլորտը. դասաժամերի տևողության կրճատում, դասավանդման ձևերի ինչ-ինչ փոփոխություններ և այլն: Կարգավորման և կատարելագործման ու վերանայման անհրաժեշտության կարիք կա:

Հաճախ սեմինար և գործնական պարապմունքները կազմակերպվում են բանավոր հարցման և գնահատման մեթոդով, որն իր արդյունավետությամբ չի համապատասխանում ժամանակակից շուկայական հարաբերությունների պայմաններում տնտեսագիտությանը ներկայացվող պահանջներին:

---

[1] Котасонов В. Ю., Коронавирус-от выруса к диктатуре, Москва, книжный мир, 2020, стр. 42.

Վերոգրյալ հոդվածի շրջանակներում նպատակադրվել ենք անդրադառնալ տնտեսագիտության տեսության դասավանդման մեթոդներում առկա որոշ թերությունների և, ի մասնավորի, գործնական պարապմունքների կազմակերպման արդյունավետության բարձրացման մի քանի հարցերի:

Վերլուծություն

Տնտեսագիտության տեսությունը մյուս գիտություններից տարբերվում է նրանով, որ ավելի շատ է առնչվում հասարակության ամեն մի անդամի կենսական շահերի հետ, քանի որ վերջիններս, մասնակից լինելով ամենաբազմազան տնտեսական հարաբերությունների, դառնում են դրա մաս և որոշ չափով հանդես են գալիս որպես տնտեսության սուբյեկտ և օբյեկտ: Տնտեսագիտության տեսությունը՝ որպես առանձնահատուկ գիտություն, ունի իրեն բնորոշ սկզբունքներն ու օրինաչափությունները, հակասությունները, և դրանց իմացության համար յուրաքանչյուր անհատ որոշակի չափով տնտեսագիտական գրագիտություն պիտի ունենա, անկախ իր մասնագիտութունից ու զբաղմունքից:

Տնտեսագիտության տեսության հիմնահարցը արտադրող-սպառող փոխգործողության կարգավորումն ու երկրների սոցիալ-տնտեսական կառուցվածքային փոփոխությունների շուրջ առաջացող խնդիրների լուծումն է:

Այս առումով հարկ է նշել, որ դրա դասավանդման և ուսումնասիրության մոտեցումներում լուրջ բացթողումները կարող են բացասաբար անդրադառնալ մրցունակ տնտեսագետ-մասնագետի պատրաստման գործի վրա:

Հաճախ ուսանողների ինքնուրույն մտածելակերպը զարգացնելու, ներքին շարժառիթներն օգտագործելու փոխարեն ավելի շատ ուշադրություն է բևեռվում դասախոսության նյութի մատուցմանը: Եվ նման դեպքերում ոչ թե ուսանողի շահերն են շաղկապվում առարկայի խնդիրներին, այլ առարկան է ներկայացվում որպես պարտադիր դասընթաց: Սա, մեր կարծիքով, վտանգավոր է այնքանով, որ ուսուցումը կարող է վերածվել ոչ էական, աննպատակ գործընթացի: Հայտնի է, որ կան գիտություններ, որոնց դասընթացի ուսումնասիրության ավարտին յուրացման աստիճանը միարժեքորեն որոշվում է: Պատկերն այլ է տնտեսագիտության տեսության պարագայում: Այստեղ ավելի քան պետք է արժևորվի ուսանողի՝ կոնկրետ իրականությունն ինքնուրույն գնահատելու հմտությունն ու կարողությունը, դիրքորոշումը, ինչ-որ բան կատարելու մակարդակն

ու որակը, այլ ոչ թե բավարարվի մատուցվող նյութի ծավալով: Չենք ժխտում, որ առանձին դեպքերում դա էլ կարևոր է:

Ներկայումս կրթության ոլորտում տեղի ունեցող ռազմավարական զարգացման ծրագրերում հատուկ տեղ է տրվում ուսանողակենտրոն ուսուցմանը: Առանց անդրադառնալու դրա բոլոր մանկավարժական առանձնահատկություններին կարելի է ասել, որ դասախոս-ուսանող փոխգործության նոր ձևերի և միջոցների հաստատման անհրաժեշտություն կա: Այլ կարծիք լինել չի կարող, որ դրանք պետք է հիմնված լինեն փոխադարձ հարգանքի, վստահության և ձևականության ու պարտադրանքի բացառման վրա:

Դասավանդման ընդունված ձևերն ու մեթոդները հաճախ հաշվի չեն առնում նման կարևոր հանգամանքները, ինչն էլ ուսանողության մի մասի մոտ ձևավորում է պասիվության և անտարբերության վիճակ: Պատճառներից մեկն էլ դա է, որ սեմինար և գործնական պարապմունքների ժամանակ շատ ուսանողներ փորձում են պատասխանել այն, ինչ կցանկանար լսել դասախոսը:

Հարց է ծագում, թե ինչպես է պետք կազմակերպել, մասնավորապես տնտեսագիտության տեսության, ուսուցումը, որ ձեռք բերած գիտելիքները նպաստեն տնտեսական հարաբերություններում արագ կողմնորոշվելու և իրական կյանքում դրանք կիրառելու հնարավորություն ապահովեն:

Համախոհ ենք այն կարծիքներին, որ տնտեսագիտությունը չպետք է դասավանդվի լոկ որպես տեսություն, այլ պետք է ներառի նաև տնտեսական պրակտիկայի տարրեր: Տնտեսագիտական գրականության շուկան ներկայումս, կարելի է ասել, հագեցված է: Տարբեր հեղինակների կողմից հրատարակված դասագրքերն ու ուսումնական ձեռնարկերը ունեն որակապես նոր կառուցվածք, դրանցում, հիմնականում բացակայում են շատ ու շատ հնացած, մերժված դոգմաներ: Տնտեսագիտական հանրության մոտ, սակայն, չկա միասնականություն, հատկապես դասավանդման մեթոդների կապակցությամբ:

Այնուամենայնիվ մասնագիտական տարաձայնությունների արդյունքում է, որ ի հայտ են գալիս դասավանդման մեթոդների կատարելագործմանն ուղղված նոր մտահղացումներ: Նման մի փորձ էլ կատարված է սույն հոդվածում:

Դիտարկումների համար հիմք է ընդունվել ՎՊՀ-ի բնական գիտությունների ֆակուլտետի «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտության առաջին կուրսերում «Տնտեսագիտության

տեսություն» դասընթացի դասավանդման փորձն ու ձեռք բերված արդյունքները:

Առաջարկությունների և ցուցումների համար ընտրված է «Ծախքերի տեսությունը» թեմայի դասավանդման օրինակը, քանի որ այն տնտեսագիտության տեսության «միկրոէկոնոմիկա» բաժնի առանցքային թեմաներից մեկն է:

Տ. գ. դ., պրոֆեսոր, Գ. Ե. Կիրակոսյանի խմբագրությամբ հրատարակված ուսումնական ձեռնարկում նշված է. «Ֆիրմաների կոմից ապրանքների առաջարկի ծավալի վրա ազդող հիմնական գործոնները ծախսերի մեծությունն ու դինամիկան են, ուստի ծախսերի վերլուծությունն ազդում է շուկայում դրսևորվող վարքագծի, թողարկվող արտադրանքի ծավալի և ձևավորվող գների վերաբերյալ ֆիրմայի որոշումների ընդունման վրա»[2]:

Ուսումնական պլանի համաձայն «տնտեսագիտության տեսություն» դասընթացը ըստ կիսամյակների, ունի ժամանակի հետևյալ բաշխումը. առաջին կիսամյակում՝ 24 ժամ դասախոսություն, 40 ժամ գործնական պարապմունք, երկրորդ կիսամյակում 32 ժամ դասախսություն, 48 ժամ գործնական պարապմունք: Ինչպես երևում է ժամաքանակի բաշխումից, գործնական պարապմունքներին կարծես թե նախապատվություն է տրված: Եվ ճիշտ է: Սա ուսանողակենտրոն ուսուցումը խթանող քայլ է, քանի որ գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ ուսանողները ավելի մեծ հնարավորություն ունեն բանավեճերի միջոցով իրենց դրսևորելու, սեփական կարծիք հայտնելու և այլն:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե գործնական պարապմունքը ուսուցման պարզագույն ձև է, բայց իրականում այստեղ է, որ դասախոսության ժամանակ լսած հանգուցային հասկացությունները ենթարկվում են ավելի խոր վերլուծության և գործնական հարթություն տեղափոխելու հնարավորություն են ստանում: Հայտնի են գործնական և սեմինար պարապմունքների վարման տարբեր մեթոդներ, որոնք տարբեր ձևով են նպաստում ուսանողակենտրոն ուսուցմանն ու մի շարք կոմպետեցիաների ձևավորմանը, ինչպես, օրինակ, խմբային աշխատանքի, ինքնուրույն աշխատելու, առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն:

Միանշանակ է, որ դասընթացի խոր և լիարժեք յուրացման, տնտեսական պրակտիկային մոտեցման համար կանոր նշանակություն ունի

[2] Գ. Ե. Կիրակոսյան, Տնտեսագիտության տեսություն, Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Տնտեսագետ», 2009, էջ 259:

գործնական և սեմինար պարապմունքների նպատակասլաց կազմակերպումը: Գործնական պարապմունքների լայն հնարավորությունները պայմանավորված չեն միայն դրան հատկացված ժամաքանակով: Այն՝ որպես ուսուցման գործընթացի սահմանափակ ռեսուրս, պետք է օգտագործվի ոչ թե «խնայողաբար», այլ արդյունավետ, որպեսզի շարժառիթ ստեղծվի դասընթացի գրավչության համար:

Նպատակահարմար է դասընթացի ներածական բաժնի պարապմունքները, ըստ ուսումնասիրվող թեմաների բարդության աստիճանի, կազմակերպել տարբեր պասիվ ու ակտիվ մեթոդներով:

Այն հանգամանքը, որ տնտեսագիտության տեսությունն ուսումնասիրվում է առաջին կիսամյակից, դասավանդողներից պահանջում է որոշակի մանկավարժահոգեբանական և մասնագիտական հմտություններ: Ցանկալի է, որ դասախոսությունների և գործնական պարապմունքների առաջին դասաժամերը կրեն ճանաչողական բնույթ, որ դրանք հուզական և մասնագիտական խթանների դեր կատարեն I կուրսեցիներին նոր միջավայրին հեշտությամբ և հաճույքով հարմարվելու համար:

Կարելի է առօրյա և կենցաղային հարցերի միջոցով ծանոթանալ նրանց հետաքրքրութունների շրջանակներին, ճշտել, թե դպրոցից հասարակագիտական ինչ նախնական գիտելիքներով են եկել: Նման մոտեցումները կարող են ուղեցույց դառնալ հետագա ուսումնադաստիարակչական գործունեության համար:

Արդեն, սկսած «միկրոէկոնոմիկայի» բաժնի թեմաների ուսումնասիրությունից, ուսանողների հետ քննարկվել են սեմինար և գործնական պարապմունքների կազմակերպման մի քանի այլ մեթոդներ ևս, որոնցից հատկապես երկուսը արժանացել են ԱՖՄ մասնագիտության I կուրսեցիների (2017-18-ից մինչև 2020-21թթ ուստարիների) շուրջ 90%-ի հավանությունը:

Ընտրված երկու մեթոդներն էլ ենթադրում են սեմինար և գործնական պարապմունքների փոքր ենթախմբերով կազմակերպում: Գործնական պարապմունքներն ի սկզբանե խմբային աշխատանքի տիպիկ ձև է:

Ելնելով առաջին կուրսի ուսանողների թվից՝ այն կարող է բաժանվել խմբերի դեկանատի կողմից: Ուսումնասիրվող մասնագիտության առաջին կուրսերի լիցենզավորված տեղերի քանակը 25-ն է: Վերը նշված տարիներին կուրսերում ուսանողների թիվը կազմել է 23-24 հոգի և ըստ կարգի նրանք բաժանված են եղել երկու խմբի, յուրաքաչյուրում՝ 12 ուսանող:

Ընտրված երկու մեթոդների դեպքում էլ առաջնորդվել ենք պայմա-

նականորեն ավելի փոքր ենթախմբեր ստեղծելու սկզբունքով, քանի որ այդ ձևը ապահովում է ավելի մեծ արդյունավետություն: Այս կարծիքին է մասնագետների մեծամասնությունը:

Գործնական պարապմունքի անխափան կազմակերպման համար I մեթոդի դեպքում առաջարկվում է գործողությունների հետևյալ հաջորդականությունը՝

1. կուրսի խմբի բոլոր անդամների ներկայությունը ապահովելու նպատակով այն բաժանվում է 3 հոգանոց 4 ենթախմբերի (12:4-3),
2. ենթախմբերում ընգրկված յուրաքանչյուր 3 ուսանողի հանձնարարվում է միևնույն հարցը (դասախոսության վերջում գործնական պարապմունքի համար հանձնարարված հարցերից),
3. հարցերին նախապատրաստվելու համար ենթախմբի ամեն մի առանձին ուսանողի հանձնարարվում է տաբեր հեղինակների կողմից հրատարակված գրականություն և այլ օժանդակ նյութեր:

«Ծախքերի տեսությունը» թեման, որի գործնական պարապմունքի համար նախատեսված է 4 ժամ (2 պարապմունք) և դասախոսությանը՝ 2 ժամ (1 պարապմունք), կազմակերպվել է հենց այս սկզբունքով:

Դասախոսության վերջում յուրաքանչյուր ուսանող ստանում է իր անհատական հանձնարարությունը: Այսպես. I ենթախմբի ուսանողների (3 հոգի) հանձնարարվել է նախապատրաստվել «Հաստատուն, փոփոխուն և համախառն ծախքերի էությունն ու դինամիկան» հարցին, յուրաքանչյուրին, սակայն, առաջարկվել է տարբեր հեղինակների կողմից հրատարակած գրականություն:

Առաջին ուսանող – գրականություն.

1. Կիրակոսյան Գ. Ե., Տնտեսագիտության տեսություն. Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Տնտեսագետ», 2009, էջ 257:
2. Добринин А. И., Тарасович Л. С., Экономическая теория, «Питер», 1999, стр. 177.

Երկրորդ ուսանող

1. Խաչատրյան Գ. Հ., Տնտեսագիտության տեսություն. Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2010, էջ 210:
2. Носова С. С., Экономическая теория, учебник, Москва, 2010, стр. 183.

Երրորդ ուսանող

1. Աղաջանյան Հ. Ի., Տնտեսագիտության տեսություն. Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2009:

2. Видяпин В. И., Журавлева Г. П., Экономическая теория (политэкономия), учебник, стр. 180.

Նույն սկզբունքով գործնական պարապմունքի հարցերն ու համապատասխան գրականությունը հանձնարարվում են խմբի մյուս ենթախմբերի ուսանողներին:

Հարցերի կրկնությունը հիմնավորված է այնքանով, որ դրանք տարբեր հեղինակների կողմից մեկնաբանված են յուրովի: Այսպես՝ Գ. Ե. Կիրակոսյանի հեղինակած դասագրքում ծախքերի կորերը գրաֆիկորեն նեկայացված են նույն գծապատկերում (տես գծ. 1)[3]:



Գծապատկեր 1

Այլ հեղինակներ դրանք ներկայացրել են առաձին-առաձին, օինակ Վ. Ի. Վոդյապին և Գ. Պ. Ժուրավլյովը (տես գծ. 2)[4]:



Գծապատկեր 2

գծ. 2[1] Հաստատուն ծախքեր (FC) գծ. 2[2] Փոփոխուն ծախքեր (VC)
գծ. 2[3] Համախառն ծախքեր (TC)

---

[3] Տե՛ս Կիրակոսյան Գ. Ե., Տնտեսագիտության տեսություն. Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Տնտեսագետ», էջ 257:

[4] Տե՛ս Видяпин В. И., Журавлева Г. П., Экономическая теория: Учебник, М., 1997, էջ 184:

Ս. Ս. Նոսովան օգտագործել է մեկ այլ տարբերակ (տես գծ. 3)[5]:



Գծապատկեր 3

Նպատակահարմար է, որ այս թեմայի գործնական աշխատանքի հատկացված 4 ժամից 2-ը հատկացվի I և II ենթախմբերին՝ իրենց հանձնարարված առաջադրանքների քննարկման համար, իսկ 2 ժամը՝ III և IV ենթախմբերին: Հասկանալի է, որ մեկ գործնական պարապմունքի ընթացքում հնարավոր չէ ապահովել բոլոր ուսանողների ակտիվ մասկացությունը, սակայն որոշակի դրական արդյունք կարելի է ստանալ: Ուսանողների հետևողական աշխատանքի դեպքում այս մեթոդի կիրառումը կարող է նպաստել հարցերի բազմակողմանի քննարկմանը, նրանց մի մասը ձեռք է բերում ինքնուրույն աշխատանքի փորձ և հմտություններ: Մասնավորապես՝

- գրականությունից օգտվելու,
- վիճակագրական տվյալներից օգտվելու,
- հիմնական և երկրորդական հասկացությունները իրարից առանձնացնելու,
- տեսությունն ու պրակտիկան իրար կապելու,
- հստակ շարադրելու և ներկայացնելու մտքերը:

«Տնտեսագիտության տեսություն» դասընթացի դասավանդման ընթացքում անհրաժեշտ է շարժառիթներ ստեղծել ուսուցումը հետաքրքիր դարձնելու համար գործնական ու սեմինար պարապմունքների այնպիսի մեթոդներ կիրառել, որոնք կնպաստեն ակտիվացնելու գիտելիքների յուրացման գործընթացը:

Ուսանողների հետ շփումներն ու հարցումները ցույց են տալիս, որ նրանց մեծ մասը հանդես է գալիս որպես իսկական շահառու և մեթոդների ու ձևերի ընտրության ժամանակ հստակ հայտնում է իր կարծիքը:

---

[5] Տե՛ս Носова С. С., Экономическая теория: Учебник, Москва, 2010, էջ 183:

Մեր կողմից ԱՖՄ մասնագիտության առաջին կուրսեցիներին առաջարկված և նրանց կողմից հավանության արժանացած ներկայացվող մեթոդը ըստ էության խմբային աշխատանքի տարատեսակ է և ենթադրում է գրավոր աշխատանքի ձևը: Գրավոր աշխատանքի համար նախապես դասախոսի կողմից կազմվում է երկու տարբերակ, յուրաքանչյուրում՝ 2 հարց: Այսպես,

I տարբերակ

1. Հաստատուն, փոփոխուն և համախառն ծախքերի էությունն ու կառուցվածքը:
2. Ձեռնարկության ծախքերի երկարաժամկետ շրջանում:

II տարբերակ

1. Սահմանային և այլընտրանքային ծախքերի էությունը:
2. Ձեռնարկության ծախքերը կարճաժամկետ շրջանում:

Տարբերակները ընտրում են ենթախմբերի ներկայացուցիչները, որից հետո սկսում են աշխատել հարցերի պատասխանների վրա:

Անհրաժեշտ է տարբերակներում նախատեսել այնպիսի հարցեր, որ դրանց յուրացումից հետո ապագայում կիրառական խնդիրներ լուծելու և մասնավոր իրավիճակներում կողմնորոշվելու հնարավորություն ստեղծվի: Այս իմաստով կարող են օգտակար լինել նաև արտադրության ծախքերի տեսակների սխեման (տե՛ս գծ. 1) և արտադրության ծախքերի դասակարգման աղյուսակը (տե՛ս աղյուսակ 1), որոնք դասախոսության ժամանակ բացատրվել և պատրաստի ձևով տրվել են ուսանողներին:

Գրավոր աշխատանքի ընթացքում դասախոսի դերը համեմատաբար պասիվ է: Նա պարզապես հետևում է ուսանողների ակտիվությանն ու անհրաժեշտության դեպքում ընդհանուր ցուցումներ է տալիս: Առաջադրանքների ավարտից հետո դասախոսը ֆիքսում է գրավոր աշխատանքները, «Ա» և «Բ» ենթախմբերը փոխանակում են դրանք ստուգելու և գնահատելու համար:



Սխեմա 1. Արտադրության ծախքերի տեսակները

Աղյուսակ 1[6]

Արտադրության ծախքերի (ծախսերի) դասակարգումը

Դասակարգման հատկանիշները		Ծախքերի ստորաբաժանումները	
1	Տնտեսական տարրեր	1	Ծախքերի տնտեսական տարրեր
2	Ինքնարժեքի հոդվածներ	2	Ինքնարժեքի կալկուլացիոն հոդվածները
3	Տեխնոլոգիական գործընթացների հետ կապը	3	Հիմնական, վերադիր
4	Կազմը	4	Միատարր, համալիր
5	Արտադրանքի ինքնարժեքի հետ կապի եղանակը	5	Ուղղակի, անուղղակի
6	Արտադրության մեջ ունեցած դերը	6	Արտադրական, ոչ արտադրական
7	Ծախսի նպատակահարմարությունը	7	Արտադրողական, ոչ արտադրողական
8	Արտադրության ծավալի հետ կապը	8	Հաստատուն, փոփոխուն
9	Պատրաստի արտադրանքի հետ կապը	9	Ընթացիկ, միանվագ

Կարելի է նշել, որ այս մեթոդի հիմնական «հնարքը» հենց սա է: Այն կարող է ուսանողների մոտ սերմանել օբյեկտվության, պատասխանատվության և վստահության հատկանիշներ, կարող է դրական ազդեցություն ունենալ մասնակցութան և ակտիվության աստիճանների բարձրացման վրա:

Գնահատման գործընթացին պետք է մասնակցեն դասաժամին ներկա բոլոր ուսանողները՝ անկախ ակտիվության աստիճանից: Գրավորների ստուգմանն ու գնահատմանը հաջորդում է խմբում («Ա» և «Բ» ենթախմբերը միասին) դրանց քննարկման եզրափակիչ, թերևս ամենահետաքրքիր ու ակտիվ փուլը:

Հանդիսանալով ուսուցման ինտերակտիվ մեթոդների հիմքը՝ քննարկումն ստիպում է դասախոսին այն կազմակերպել այնպես, որ յուրաքանչյուր ուսանող ակտիվորեն ներգրավվի այդ գործընթացի մեջ: Քննարկումն ինչ-որ տեղ ստուգողական և որոնման աշխատանք է՝ ուղղված անցած նյութի յուրացման աստիճանին: Ուստի դասախոսը պետք է

[6] Տե՛ս Добринин А. И., Тарасович А. С., Экономическая теория, учебник для вузов, Санкт-Петербург, 1999:

ունենա խումբը ղեկավարելու այնպիսի հմտություն, որ ապահովի յուրաքանչյուրի՝ կարծիք հայտնելու, արտահայտելու հնարավորությունը: Ենթախմբերից մեկական ուսանող 5-10 րոպեի ընթացքում ներկայացնում է գրավոր աշխատանքներում իրենց կողմից նկատված սխալներն ու թերությունները, հինավորում նշանակված գնահատականը: Այնուհետև ծավալվում է բանավեճ: Ուսանողներն սկսում են հարցեր ու պատասխաններ փոխանակել, հիմնավորել դրանք, պնդել անձնական տեսակետը:

Խորհուրդ չի տրվում, որ ուսանողների կողմից արտահայտված որևէ միտք, կարծիք անմիջապես քննադատվի: Դրանք կարող են ընդունվել կամ ոչ: Չի կարելի նաև սխալ դիրքորոշումը պատժել բացասական գնահատականով, հակառակ դեպքում, այն կարող է նպաստել պասիվ ու «անկարծիք» ուսանողի ձևավորմանը:

Փորձը ցույց է տվել, որ «Ծախսերի տեսությունը» թեմայի գործնական պարապմունքի որոշ հարցեր, գրավոր աշխատանքներում պատշաճ մակարդակով վերլուծության չեն ենթարկվում կամ մեկնաբանվում են սխալ ուղղությամբ: Քննարկումների ժամանակ նույնպես ուսանողներն այս հարցերը մեկնաբանելիս որոշակի դժվարությունների են հանդիպում: Այսպես, օրինակ,

1. երբ կարող են հաստատուն ծախքերը վերածվել փոփոխականի
2. ձեռնարկության ծախքերը երկրաժամկետ շրջանում

Նպատակահարմար չէ, որ դասախոսն անմիջապես անցնի սխալների ուղղմանը, բայց և չի կարելի դրանք աննկատ թողնել: Նրա միջնորդություններն ու ցուցումները պետք է ուղղորդված լինեն մեկ հիմնական նպատակի՝ հարցերի պատասխանները տրվեն ուսանողների կողմից և օգնեն, որ դրանք լինեն ճիշտ ու միասնական: Դասի ավարտին կարելի է անել պնդումներ, որոնք ընդհանուր են և կարող են ունենալ կիրառական նշանակություն:

Եզրակացության փոխարեն

Ամփոփելով մի քանի տարիների փորձը՝ կարելի է փաստել, որ աճում է հետաքրքրությունը նման մեթոդների նկատմամբ: Աստիճանաբար մեծանում է ուսանողների ակտիվությունը, ձևավորվում են այնպիսի որակներ, որոնք խթանող դեր կարող են կատարել ուսանողների կայուն գիտելիքների ձեռք բերման և հետագայում դրանց նպատակային օգտագործման գործում: Այսպես՝

- Ձևավորվում է մրցակցային միջավայր:
- Ուսանողները ձեռք են բերում համատեղ աշխատելու և աշխա-

տանքի բաժանման փորձ ու հմտություններ:

- Խմբերում ի հայտ են գալիս լիդերներ, որոնք կարողանում են դրականորեն ազդել խմբի ուսանողների ակտիվության աստիճանի բարձրացման վրա:
- Ակտիվանում է ուսանող-դասախոս վստահելի փոխգործունեությունը:

Մի շարք հետազոտություններ ցույց են տվել, որ տարբեր ձևերով ստացված ինֆորմացիան հիշողության մեջ նույն չափով չի մնում[7]:

Ընթացիկ և միջանկյալ քննությունների արդյունքների վերլուծությունից հետևում է, որ համանման գործնական պարապմունքների ժամանակ քննարկված հարցերի պատասխաններն արաժանացել են համեմատաբար բարձր գնահատականի:

Գրականություն

1. Աղաջանյան Հ. Ի., Տնտեսագիտության տեսություն. Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2009:
2. Խաչատրյան Գ Հ., Տնտեսագիտության տեսություն. Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2010:
3. Կիրակոսյան Գ. Ե., Տնտեսագիտության տեսություն. Ուսումնական ձեռնարկ, «Տնտեսագետ», Երևան, 2009:
4. Համբարձումյան Ա. Հ., Մարդկային ռեսուրսների և աշխատանքի էկոնոմիկա, Երևան, 2016:
5. Պողոսյան Ս. Մ., Տնտեսագիտություն. Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2004:
6. Видяпин В. И., Журавлева Г. П., Экономическая теория (политэкономия), учебник, Москва, 1997.
7. Добринин А. И., Тарасович А. С., Экономическая теория: Учебник для вузов, Санкт-Петербург, 1999.
8. Добринин А. И., Тарасович А. С., Экономическая теория: Учебник для вузов: Задачи, логические схемы, методические материалы, Санкт-Петербург, 1999.
9. Носова С. С., Экономическая теория: Учебник, Москва, 2010.
10. Швандар В. А., Горфинкел В. Я., Экономическая теория, Москва, изд. «ЮНИТИ», 1998.

---

[7] **Ծանոթագրություն:** Է. Դեյլը (Э. Дейл, Аудиовизуальные методы обучения, 1954, США) կազմել է իրազեկության հիշողության բուրգ, ըստ որի՝ այն, ինչ կարդում են, հիշում են 10 %-ով, այն, ինչ լսում են, հիշում են 20 %-ով, …. այն, ինչ ինքնուրույն են անում, հիշում են 90 %-ով:

Задачи практических и семинарских занятий по экономической теории и некоторые вопросы повышения их эффективности

Самвел Жамгарян

Резюме

Ключевые слова: *структура и содержание предмета, методы и приемы обучения, предмет исследования, рыночные отношения, теоретические знания, издержки, подгруппа*

Экономическая теория как общественная наука на протяжении своего существования подвергалась взлетам и падениям. За это время формировались новые экономические направления, которые были оторваны от основных условий предмета исследования.

Практикуются многообразные формы лекционных, практических и семинарных занятий, и всегда есть объективная необходимость их усовершенствования.

В последнее время возрос интерес студентов к экономической науке. Это объясняется тем, что изменились структура и содержание предмета. Однако все еще сохранились традиционные, устаревшие формы процесса обучения, например: вопросо-ответная форма.

Необходимо, чтобы методы и приемы обучения на практических занятиях вызывали интерес студентов на протяжение всего процесса. Сегодня, в условиях рыночных отношений, поощряются те формы и методы обучения, благородя которым возможно будет применение приобретенных теоретических знаний в реальной жизни.

В статье дается подробный анализ практического занятия.

Проведения письменной работы в малых группах по ключевым вопросам теории издержек, участие студентов в их проверке и оценивании, обсуждение результатов помогут сформировать качества, которые пригодятся им в дальнейшей трудной деятельности.

The Objectives of Practical Lessons on the Theory of Economics and Some Important Issues for Improving Their Efficiency

Samvel Zhamharyan

Summary

Key words: *the essence and structure of the subject, teaching ways and methods, the subject of research, market relations, the oretical significance, costs, subgroup*

The theory of economics as a social science has always had rapid development and decline phases during its existence. In the meantime, many new schools and directions of economics were formed, often deviating from the basic requirements of the subject matter. Various passive, active, interactive methods and ways of lectures, seminars and practical lessons are used, for which there is always an objective need for improvement.

Recently, some students have become more interested in economics. This is due to the fact that the structure and content of the economics course have changed. Often, instead of working in this directions, indifference appears, for example, the traditional, outdated question-answer method of seminars is still in use.

However, it is necessary of teaching methods and ways, particularly of practical lessons, to be the type so as to maintain this interest throughout the entire educational process.

Today, in the conditions of market relations, the ways and methods of teaching are encouraged, which create an opportunity to correctly apply the obtained theoretical knowledge in real life.

A thorugh analysis of practical lessons is given in the tellowing article.

In small subgroups mentioned in this article, the written works based on key issues of cost theory, the reviewing and evaluating by the participants and the discussions in the group can instill in students qualities that will be useful in the course of their work.

Ներկայացվել է 04.09.2021 թ.
Գրախոսվել է 11.09.2021 թ.
Ընդունվել է տպագրության 29.11.2021 թ.